ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/51

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.05.2018թ. թիվ 03/26-3/8536-18 գրությամբ «Էրոդավ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00885415) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.05.2018թ. թիվ ԴՎԱ/1608 գրության հիման վրա, 14.05.2018թ. «Էրոդավ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.05.2018թ. թիվ ԴՎԱ/1608 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 25.04.2018թ. «Մավէժ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և մերժված 5-րդ, 10-րդ և 54-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էրոդավ» ՍՊԸ-ն: 25.04.2018թ. գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Էրոդավ» ՍՊԸ-ին ներկայացնելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Սակայն «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով 43-րդ կետի 4-րդ մասի պահանջները, որոշեց մերժել «Էրոդավ» ՍՊԸ-ի հայտը:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Ռոբերտ Զադոյանը:

3. «Էրոդավ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էրոդավ» ՍՊԸ-ն 18.05.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«2018 թվականի 13.03.2018թ. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կապի սարքերի և սարքավորումների ձեռքբերման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով էլեկտրոնային մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով Էրոդավ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացրել էր հայտ: Մրցույթի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 22.03.2018թ. ժամը 11:00-ին, հայտերի բացման նիստի մասին Պատվիրատուն կազմել է թիվ 3 և թիվ 4 արձանագրությունները: Թիվ 4 արձանագրության 4.1 կետով, 07.04.2018թ.

Պատվիրատուն ի թիվս այլ մասնակիցների Մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել՝

- 1-րդ, 5-րդ, 9-րդ, 11-րդ, 25-րդ, 27-րդ, 28-րդ, 32-րդ, 33-րդ, 38-րդ, 39-րդ, 41-րդ, 45-49-րդ, 54-րդ և 59-6-րդ 2 չափաբաժինների մասով «Յուտեկ» ՍՊԸ-ին,
- 12-րդ, 24-րդ, 26-րդ, 64-րդ և 65-րդ չափաբաժինների մասով «Էրոդավ» ՍՊԸ-ին,
- 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 53-րդ և 55-րդ չափաբաժինների մասով «ՄաժԷվ» ՍՊԸ-ին,
- 31-րդ չափաբաժնի մասով «Էլմարկետ» ՍՊԸ-ին:

09.04.2018թ. www.armeps.am էլեկտրանային համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ Ընկերությանը ծանուցել է, որ 1-ին տեղ զբաղերած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլ. փ. ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Ընկերությանը համաձայն ծանուցման, հրավերով սահմանված ժամկետում և կարգով 12-րդ, 24-րդ, 26-րդ, 64-րդ և 65-րդ չափաբաժինների համար ներկայացրել է պահանջված բոլոր փաստաթղթերը: Մրցույթի 17.04.2018 թվականին թիվ 5 արձանագրության 1.1 կետով Ընկերության 12-րդ, 24-րդ, 26-րդ, 64-րդ և 65-րդ չափաբաժինների համար ներկայացրած փաստաթղթերը հանձնաժողովը ընդունել է և համարել գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Պատվիրատուն 17.04.2018թ. թիվ 5 արձանագրության 1.1 կետով հայտնել է, որ «Մաժեվ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ նշված կազմակերությունը սահմանված ժամկետում որոկավորման փաստաթղթերը չի ներկայացրել: Սակայն ԳԲԽ-ԱՄ-2018/60 ծածկագրով 17.05.2018թ. կայացրած բողոքի որոշման համաձայն «Մաժեվ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը դադարեցվել է: Հիշեցնենք, որ «Մաժեվ» ՍՊԸ-ն մրցույթի շրջանակներում 10-րդ չափաբաժնի մասով ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցրած:

Նաև պատվիրտուն 2018 թվականի ապրիլի 17-ի թիվ 5 արձանագրությաբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կատարված հարցմամբ ստացված եզրակացության համաձայն՝ «Յուտեկ» ՍՊԸ-ն և «Էլմարկետ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն

ժամկետնանց պարտավորություններ, «Յուտեկ» ՍՊԸ-ն՝ 3159 ՀՀ դրամի չափով, իսկ «Էլմարկետ» ՍՊԸ-ն՝ 12936 ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով «Յուտեկ» ՍՊԸ-ի հարկային պարտավորություն ունենալու փաստը պատվիրատուն հայտնել է, որ «Յուտեկ» ՍՊԸ-ի հայտը 5-րդ, 49-րդ, 54-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել, քանի որ ըստ Պատվիրատուի այդ պարտավորության չափը գերազանցում է մասնակցի ներկայացրած գնի առաջարկի 1 տոկոսը:

17.04.218թ. թիվ 5 արձանագրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ 10-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցնող էր «Էլմարկետ» ՍՊԸ-ն, քանի որ «Էլմարկետ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ուներ ժամկետնանց հարկային պարտավորություն և ըստ Պատվիրատուի այդ պարտքի չափը գերազանցում է մասնակցի ներկայացրած գնի առաջարկի 1 տոկոսը և որոշում է կայացվել մերժել «Էլմարկետ» ՍՊԸ-ի հայտը 10-րդ չափաբաժնի մասով:

Սակայն մերժելով «Յուտեկ» ՍՊԸ-ի և «Էլմարկետ ՍՊԸ-ի հայտերը Պատվիրատուն հաշվի չի առել այն, որ «Յուտեկ» ՍՊԸ-ի ներկայացրած գնի առաջարկը կազմում է 94184400 (իննսունչորս միլիոն մեկ հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ ԱԱՀ-ն ներառյալ իսկ «Էլմարկետ ՍՊԸ-ի ներկայացրած գնի առաջարկը կազմում է 17396880 (տասնյոթ միլիոն երեք հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ ԱԱՀ-ն ներառյալ և այդ կազմակերպությունների ժամկետնանց հարկային պարտավորությունները ակնհայտ քիչ են իրենց ներկայացրած գնի առաջարկների մեկ տոկոսից և չեն գերազանցում 50000 հիսուն հազար ՀՀ դրամը: Նաև պատվիրատուն այդ հիմքով մերժելու դեպքում պարտավոր էր մերժել մասնակիցների ներկայացրած հայտը ամբողջությամբ բոլոր չափաբաժինների մասով, քանի որ Մրցույթի հրավերի 1-ին մասի 2.1 կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, այն մասնակիցները ովքեր հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ իրավունք չունեն մասնակցելու գնման ընացակարգին:

Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ Պատվիրատուն մերժելով Յուտեկ ՍՊԸ-ի և Էլմարկետ ՍՊԸ-ի հայտերը 5-րդ, 49-րդ, 54-րդ և 10-րդ չափաբաժինների մասով գործել է ոչ իրավաչափ:

Ինչևէ, Պատվիրատուն մերժելով «Յուտեկ» ՍՊԸ-ի և «Էլմարկետ» ՍՊԸ-ի հայտերը 17.04.2018թ. թիվ 5 արձանագրությամբ որոշեց 5-րդ, 54-րդ և 10-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էրոդավ» ՍՊԸ-ին և 25.04.2018թ. ոչ ավտոմատ ծանուցմամբ Ընկերությանը ծանուցել է, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլ. փոստի հասցեին ներկայացնել՝ հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի՝ 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Ընկերությունը համաձայն ծանուցման, հրավերով սահմանված ժամկետում և կարգով 5-րդ, 54-րդ և 10-րդ չափաբաժինների համար ներկայացրել է պահանջված բոլոր փաստաթղթերը:

Սակայն մարդկային գործոնի պատճառով a.baghramyan@mil.am էլ. փ.-ի փոխարեն 25.04.2018թ. ոչ ավտոմատ ծանուցմամբ պահանջված փաստաթղթերը սխալմամբ 02.05.2018թ. ուղարկվել են a.amiryan@mil.am էլ. փոստի հասցեին, որը նույնպես հանդիսանում է Պատվիրատուի Գնումների բաժնի հետ կապված էլ. փոստի հասցե, այդ մասին վկայում են Պատվիրատուի կողմից հայտարարված ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1 և ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրերով մրցույթներում նշված էլ. փոստի հասցեները՝ a.amiryan@mil.am: Նաև հայտնում ենք, որ Ընկերությունը քիչ ուշ նկատելով տեղ գտած սխալը 2018 թվականի մայիսի 04-ին 25.04.2018թ. ոչ ավտոմատ ծանուցմամբ պահանջված փաստաթղթերը ուղարկել է նաև a.baghramyan@mil.am էլ. փ.-ին: Ընկերության նշված գործողությունները վկայում են այն մասին, որ ընկերությունը չի հրաժարվում գնման գործընթացին հետագա մասնակցությունից և ուղղելով իր սխալը չի խախտում գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Վերլուծելով վերը գրվածը գտնում ենք, որ Պատվիրատուն մերժելով «Յուտեկ» ՍՊԸ-ի և «Էլմարկետ» ՍՊԸ-ի հայտերը 5-րդ, 49-րդ, 54-րդ և 10-րդ չափաբաժինների մասով գործել է ոչ իրավաչափ, այդ իսկ պատճառով Ընկերությանը 5-րդ, 54-րդ և 10-րդ չափաբաժինների մասով որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու հիմքեր չկան, հետևաբար այդ չափաբաժինների մասով Ընկերությանը հարկ չկար պարտավորեցնելու

ներկայացնել 25.04.2018թ. ոչ ավտոմատ ծանուցմամբ պահանջված փաստաթղթերը: Եվ հաշվի առնելով, որ Ընկերությունը իր կատարած գործողություններով պատրաստ է անգամ այդ չափաբաժինների մասով պատվիրատուի հետ կնքել պայմանագիր և խնդրում ենք Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Վահե Մարգարյանը և լիազորված ներկայացուցիչներ Հակոբ Մեսրոպյանը, Հարություն Օհանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/51 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 14.05.2018թ. թիվ 03/26-3/8536-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.05.2018թ. թիվ ԴՎԱ/1608 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 22.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4, 17.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 և 07.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությունները, Պատվիրատուի կողմից 09.04.2018թ. «Էրոդավ» ՍՊԸ-ին ուղղված ծանուցումը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ կապի սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Էրոդավ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին

հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

• N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 22.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության՝

- 4.1 կետով որոշել է ընթացակարգի 12-րդ, 24-րդ, 26-րդ, 64-րդ, և 65-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Էրոդավ» ՍՊԸ-ին:

- 4.2 կետով որոշել է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 09.04.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Էրոդավ» ՍՊԸ-ին ուղարկվել է հետևյալ ծանուցումը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով ընթացակարգի 12-րդ, 24-րդ, 26-րդ, 64-րդ, և 65-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էրոդավ» ՍՊԸ-ն: Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով

սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:»:

Հանձնաժողովը 07.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Էրոդավ» ՍՊԸ-ի որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է՝

- 5-րդ, 10-րդ և 54-րդ չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Էրոդավ» ՍՊԸ-ին:

- առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 25.04.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Էրոդավ» ՍՊԸ-ին ուղարկվել է հետևյալ ծանուցումը.

«Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժված 5-րդ, 10-րդ և 54-րդ չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Էրոդավ» ՍՊԸ-ին: Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:»:

Հանձնաժողովը 07.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չի ներկայացրել:

Նույն արձանագրության, նույն կետով Հանձնաժողովը որոշել է «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «Էրոդավ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից ստացված ծանուցման համաձայն, Հրավերով սահմանված ժամկետում նշված՝ 5-րդ, 54-րդ և 10-րդ չափաբաժինների համար ներկայացրել է պահանջված բոլոր փաստաթղթերը, սակայն տեղի է ունեցել սխալմունք և պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու փոխարեն, սխալմամբ ուղղարկվել են՝ a.amiryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին, որը սակայն, նույնպես հանդիսանում է Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն, ինչի մասին վկայում են Պատվիրատուի կողմից նախկինում հայտարարված մրցույթների հրավերները: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ նկատելով, որ սխալմամբ նշված փաստաթղթերը ուղարկվել է a.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին, հաջորդ օրը դրանք ուղարկել է a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց Պատվիրատուին՝ 02.05.2018թ. և 04.05.2018թ. a.amiryan@mil.am և a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեներին ուղղարկված նամակների կարճապատկերումները (screenshot):

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Բողոքներ քննող անձի այն հարցին, թե արդյո՞ք Ընկերության կողմից նշված a.amiryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեն նույնպես հանդիսանում է ՀՀ պաշտպանության նախարարության գնումների բաժնի հետ կապված էլեկտրոնային փոստի հասցեն, Պատվիրատու ներկայացուցիչը պատասխանեց, որ նշված a.amiryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեն նույնպես հադիսանում է ՀՀ պաշտպանության նախարարության գնումների բաժնի հետ կապված էլեկտրոնային փոստի հասցեն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների

պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):
- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

- «Էրոդավ» ՍՊԸ-ն 02.05.2018թ. Հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը սխալմամբ ուղարկել է a.amiryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին:

• Ընկերությունը նկատելով տեղ գտած սխալը, կրկին անգամ 04.05.2018թ. պահանջվող փաստաթղթերը ուղարկել է a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին:

• a.amiryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեն նույնպես հանդիսանում է Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեն:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից Հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը ուղարկվել են Պատվիրատուին:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Ընկերության կատարած գործողությունները վկայում են այն մասին, որ «Էրոդավ» ՍՊԸ-ն չի հրաժարվել գնման գործընթացի հետագա մասնակցությունից և նպատակ չի հետապնդել խուսափելու գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարումից:

Ինչ վերաբերում է «Էրոդավ» ՍՊԸ-ի այն պնդմանը, որ հանձնաժողովը՝ մերժելով «Յուտեկ» ՍՊԸ-ի և «Էլմարկետ» ՍՊԸ-ի հայտերը 5-րդ, 49-րդ, 54-րդ և 10-րդ չափաբաժինների մասով, գործել է ոչ իրավաչափ, այդ իսկ պատճառով «Էրոդավ» ՍՊԸ-ին 5-րդ, 54-րդ և 10-րդ չափաբաժինների մասով որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու հիմքեր չկան, անհիմն է, քանի որ ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժին գնահատվում է առանձին, իսկ «Յուտեկ» և «Էլմարկետ» ՍՊԸ-ների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց պարտավորությունները գերազանցել են վերջիններիս կողմից ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկների մինչև մեկ տոկոսը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էրոդավ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.05.2018թ. թիվ 03/26-3/8536-18 գրությամբ «Էրոդավ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00885415) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ